ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2021թ. տարեկան հաշվետու ժողովի ելույթը (Վլադիմիր Հարությունյան)

Հաշվետու ժողովի հարգելի մասնակիցնե՛ր,

Մինչև ելույթիս անցնելը, ցանկանում եմ երկու իրողություն արձանագրել.

Առաջին. ՀՀ ԳԱԱ նորընտիր ղեկավարությունը սկսեց համակարգի ինստիտուտների կոլեկտիվների հետ հանդիպումների շարք, ոչ թե նախագահության, այլ տեղերում՝ անմիջապես ինստիտուտների պայմաններին և, աշխատակիցների հետ ծանոթանալու ձևաչափով:

Երկրորդ. ՀՀ էկոնոմիկայի նախարարը իր տեղակալի, ՊՈԱԿ-ի տնօրենի ու խորհրդականի հետ երկու անգամ իմ 1,5 տասնամյա տնօրինության ընթացքում, համագործակցության ակնկալիքով այցելել են ինստիտուտ՝ հանդիպումներ ունենալով ինստիտուտի տնօրինության ու բաժինների վարիչների հետ: Միաժամանակ ցանկանում եմ ի լուր բոլորի հայտարարել, որ.

1) ակադեմիայի անդամների, ինստիտուտների տնօրենների, ինչպես նաև գիտաշխատողների ընտրության չափորոշիչները հստակեցված չեն, արդյունքում հաճախ բաժանարար գծերը խառնվում են և բոլորի համար գծվում է հավասարության նշան:

2) Ինստիտուտի տնօրենները ընտրվելու ժամանակ ներկայացնում են լավ կամ վատ տեսլական իրենց ինստիտուտների հետագա զարգացման վերաբերյալ և 5 տարի ժամկետով ընտրվում են տնօրեն ու մոռանում են իրենց տված խոստումների ու ծրագրային դրույթների մասին: Գործում է հայտնի շղթան. Տնօրենները ներկայացնում են թեմաների ղեկավարների կատարած աշխատանքները: Եվ այդպես տարեց տարի:

Հաշվետու ժողովի հարգելի մասնակիցնե՛ր:

Առաջարկում եմ այս տարվա հաշվետու ժողովն անցկացնել փոքր-ինչ այլ ձևաչափով: Ավանդաբար ինստիտուտի հաշվետու ժողովների ընթացքում ինստիտուտի բոլոր թեմաների գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները ներկայացրել է տնօրենը, այսինքն՝ այդ ամենը սեփականաշնորհելով իր կողմից: Այս տարի առաջարկում եմ ժողովի մասնակիցներին և բաժանմունքի ակադեմիկոս Յուրի Սուվարյանին, որ առանձին թեմաներով ստացված արդյունքներն անձամբ ներկայացնեն թեմաների ղեկավարները, որն արդարացված կլինի, իսկ հարցեր առաջանալու դեպքում իրենք ներկայացնեն պարզաբանումներ և լրացուցիչ տեղեկություններ: Իսկ ես, որպես թեմայի ղեկավար, թեմայի գծով ստացված արդյունքների ներկայացման իրավունքը կփոխանցեմ թեմայի մասնակից Եվգենյա Հակոբյանին: Ես, որպես տնօրեն, կներկայացնեմ ինստիտուտում իրականացված այն աշխատանքները, որոնք ստանձնել եմ իրականացնել իմ ծրագրային ելույթում՝ տնօրեն ընտրվելու ժամանակ: Այն նոր մշակույթ է, որը կփորձեմ գործարկել այս հաշվետու ժողովի ընթացքում:

Եվ այսպես, Ինստիտուտի տնօրենի պաշտոնում, ինստիտուտի ընդհանուր ժողովի միջնորդությամբ, նախագահությունում վերընտրվել եմ 2017թ. ապրիլի 20-ին: ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում, ծրագրային ելույթի տեսքով, առաջարկել եմ ինստիտուտի հետագա գործունեության 2017-2022թթ. զարգացման իմ տեսլականն ու ծրագրերը, որոնց շնորհիվ ընտրվել եմ տնօրեն 5 տարի ժամկետով: Ուս-

տի հաշվետու ելույթիս առաջին մասը ցանկանում եմ նվիրել նախագահության նիստում իմ ծրագրային ելույթում ստանձնած պարտավորությունների և միջոցառումների իրագործման ընթացքին։

Եվ այսպես՝

Առաջին՝ ծրագրային խնդիրների 1-ին կետով նախատեսում էի երիտասարդացնել ինստիտուտի գիտական անձնակազմը, որպեսզի տարիներ անց, ինստիտուտի գիտական անձնակազմը չկանգներ ծերացման վտանգի առջև։ Այս մասով, հարգելի՛ գործընկերներ, զեկուցում եմ, որ ինստիտուտի գիտական անձնակազմի միջին տարիքը 32 է։ Դա նշանակում է, որ ինստիտուտում առկա է գիտական լուրջ ներուժ։ Նրանց կողքին գտնվող ավագ սերնդի փոքրաթիվ ներկայացուցիչներն իրենց փորձն ու գիտելիքներն են փոխանցում երիտասարդներին։ Ինստիտուտում գործում են «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի համար» սկզբունքը։

Արդյունքում ստացվել է այնպես, որ բազային ֆինանսավորմամբ գիտական թեմաների մեծ մասի ղեկավարները և նաև կատարողները երիտասարդներ են։ Եվ հաշվետու տարում ինստիտուտը հրապարակել է խիստ արդիական և կիրառական առաջարկություններով հագեցած գիտական հոդվածների ստորև բերվող ժողովածուները.

1) Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի 390 էջանոց ժողովածուն,

2) ««Տնտեսական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում» 488 էջանոց ժողովածուն։

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարությունների գործունեության ծրագրերի ելակետային դրույթները և հետևելով «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի օրենսդրական պահանջներին, շուրջ 70 կիրառական առաջարկություններ է ներկայացրել հանրապետության կառավարությանը։ Ինստիտուտի տնօրենի կողմից ներկայացվել է 15 կիրառական առաջարկություններ, որոնք հրապարակվել են երեք գրքերի ձևաչափով։

Երկրորդ՝ ծրագրային խնդիրների 3-րդ կետով նախատեսվում էր միջոցառումներ ձեռնարկել գիտական և, մասնավորապես, արտերկրում հրապարակվող հոդվածների ու գրքերի թիվն ավելացնելու ուղղությամբ։ Հաշվետու տարում ինստիտուտի գիտաշխատողները հրապարակել են թվով 15 գրքեր և հարյուրից ավելի գիտական հոդվածներ։

Երրորդ՝ ծրագրային խնդիրների 4-րդ կետով նախատեսվում էր միջոցառումներ ձեռնարկել դրամաշնորհային ծրագրերին և մրցույթներին գիտական աշխատողների ընդգրկվածությունն ավելացնելու ուղղությամբ և մեր ջանքերը գիտության պետական կոմիտեում արդյունք են տվել և 2 թեմա հաղթող են ճանաչվել, ի տարբերություն նախորդ 3-4 տարիների։

Ինստիտուտի կողմից ամեն տարի հրատարակվող «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտական հոդվածների 2020թ. ժողովածուի խմբագրական խորհրդի կազմը ընդլայնվել է՝ ներառելով նաև միջազգային փորձագետներ Սերգեյ Դոխոլյանին Ռուսաստանից և Վիկտոր Զախարյանին Ավստրիայից։ Այս ժողովածուում հոդվածներ են ներկայացրել տպագրության նաև օտարերկրյա քաղաքացիություն ունեցող մեր հայրենակիցներ Վիկտոր Զախարյանը Ավստրիայից և Ռոբերտ Թու-

մանյանը Չինաստանից: Բացի դրանից, ինստիտուտի գիտաշխատողները հոդվածներ են ուղարկել նաև սկոպուսի ամսագրերում տպագրության, որոնք ամենայն հավանականությամբ կհրապարակվեն և իրենց արտացոլումը կստանան ինստիտուտի 2022թ. և 2023 հաշվետվություններում:

Բայց պետք է արձանագրեմ, որ միջազգային համագործակցության տեսանկյունից ինստիտուտի ամենանշանակալի ձեռքբերումն այն է, որ «Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում». գիտական հոդվածների ժողովածու-2020» գիրքը ներկայացվել է «Սկոպուս» միջազգային գիտական ինդեքսավորման համակարգին՝ դրանում ներառվելու ակնկալությամբ: Ինստիտուտն այդ գործընթացի մեջ է արդեն երկու տարի և երևի միակն է բաժանմունքում: Գործնական քայլեր են կատարվում «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով հրապարակվող ժողովածուն ԲՈԿ-ի ցանկում ընդգրկվելու ուղղությամբ:

Չորրորդ՝ ծրագրային խնդիրների 5-րդ կետով նախատեսվում էր միջոցառումների ձեռնարկում՝ մամուլում լուսաբանելու միջոցով ինստիտուտի գործունեության հանրայնացման ուղղությամբ, քանի որ գիտական հրապարակումները, ինչպես գիտեք, տեսանելի և հասանելի են միայն հասարակության նեղ հատվածի: Հասարակության լայն շերտերը գործնականում չեն շփվում գիտական կազմակերպությունների հետ և որի պատճառով իմ նախընտրական ելույթում խնդիր էր դրվել գիտական հրապարակումներին զուգահեռ, հանդես գալ նաև գիտահանրամատչելի հրապարակումներով՝ ներկայացնելով ինստիտուտի գործունեությունը:

Այդ համատեքստում ինստիտուտի գործունեությունը լուսաբանվել և հանրայնացվել է «Ազգ» շաբաթաթերթի և «Գիտություն» ամսաթերթի համարներում:

Հինգերորդ՝ իմ ծրագրային ելույթի ելակետային դրույթներից է նաև 2018թ. որակյալ գիտական հետազոտությունների տարի հայտարարելը: Բայց ստացվեց այնպես, որ որակյալ գիտական հետազոտությունների տարի դարձավ ոչ միայն իմ տնօրեն ընտրվելու հաջորդող տարին, որի մասին զեկուցել եմ 2018թ. հաշվետու ժողովի ընթացքում, այլև 2020 և 2021 թվականները, որի շրջանակներում կարող եմ առանձնացնել հետևյալ հրապարակումները:

1. «Տնտեսական հրաշքներ». գործարկման ուղիները Հայաստանում,
2. Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում,
3. «Տնտեսական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում,
4. ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Հարությունյանի կողմից ՀՀ կառավարություն ներկայացրած կիրառական առաջարկություններ 2008-2020թթ.,
5. ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կողմից ՀՀ կառավարություն ներկայացրած կիրառական առաջարկություններ, ՄԱՍ 1, 2007-2017թթ. և ՄԱՍ 2, 2018-2020թթ.:
6. Ստեփան Պապիկյանի հեղինակած «Արցախի էներգետիկան» 200 էջանոց մենագրությունը:

Վեցերորդ՝

1. Ինստիտուտի գործունեության հրապարակայնացմանն ուղղված կարևոր քայլ պետք է համարել նաև այն, որ ինստիտուտի էլեկտրոնային կայքում

(economics.sci.am) բաց մատչելիությամբ տեղադրված են վերջին տարիներին ինստիտուտի հրատարակած շուրջ 500 հոդվածների և ավելի քան 40 գրքերի էլեկտրոնային տարբերակները: Բավական է նշել, որ կայքից հոդվածների և գրքերի տարեկան ներբեռնումների թիվն ավելի քան 1000 է, որը վկայում է կայքի նկատմամբ մասնագիտական հանրության աճող ուշադրության և հետաքրքրության մասին: Կայքը շարունակաբար զարգացնելու վերջնական նպատակը այն հայ տնտեսագիտական հանրության համար տեղեկատվություն ստանալու և մտքեր փոխանակելու միասնական հարթակի վերածելն է:

2. Ծրագրային ելույթի ելակետային դրույթներից էր նաև աշխատանքային կարգապահության և աշխատանքային պայմանների բարելավումը: Հաշվետու տարում պատիվ ունեմ զեկուցելու, որ.

1) միջոցառումներ են ձեռնարկվել աշխատանքային միջավայրի անվտանգության ապահովման և բարձրացման ուղղությամբ,

2) միջոցառումներ են ձեռնարկվել առկա՝ բարոյապես և տեխնիկապես մաշված համակարգչային և կենցաղային տեխնիկան փոխարինելու և համալրելու ուղղությամբ: Ձեռք են բերվել ժամանակակից համակարգիչներ, բազմաֆունկցիոնալ տպող սարք, անխափան սնուցման սարքեր, շերտավարագույրներ, պատի ժամացույցներ, գծային հեռախոսասարքեր, սառնարան, հեռուստացույց և աշխատանքային պայմանների բարելավելուն ուղղված այլ միջոցներ, թվում է այս առումով ինստիտուտը լավագույնի կարգավիճակում է,

3) արդիականացվել է համակարգչային և ներքին հեռախոսային ցանցը, ձեռք են բերվել երթուղիչներ, ընդլայնվել են ներքին ավտոմատ հեռախոսային կայանի հնարավորությունները: Սանհանգույցներում ջրի անխափան մատակարարման նպատակով տեղադրվել է ճնշման ավտոմատ կարգավորմամբ պոմպ,

4) էլեկտրաէներգիայի խնայողության նպատակով ինստիտուտում տեղադրված լուսավորության շիկացման լամպերը փոխարինվել են էներգախնայող ԼԷԴ լամպերով:

Վերոնշյալների առումով ինստիտուտը դարձել է լավագույններից մեկը բաժանմունքում, եթե ոչ լավագույնը, եթե դրանց էլ հավելում ենք բոլոր սենյակներում օդորակիչների առկայությունը և ավտոմատ ջեռուցման համակարգ ունենալը: Այս պայմաններում ինստիտուտի կոլեկտիվը վարձահատույց է եղել իր գործունեության առանձնահատկություններով, որոնք պարզ թվարկմամբ հետևյալներն են.

1. Տնտեսագիտության ինստիտուտը տարիներ շարունակ աչքի է ընկել հանրապետության կառավարությանը կիրառական առաջարկություններ ներկայացնելով (որոնց թիվը հասնում է 70-ի) և, որոնք հաշվետու տարում հրապարակվել են 3 գրքերի գրքերի ձևաչափով, այսինքն՝ ինստիտուտը կատարել է «Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի օրենսդրական պահանջները՝ զբաղեցնելով առաջին պատվավոր հորիզոնականը:

2. 44-օրյա պատերազմից հետո տնտեսագիտության ինստիտուտի կառուցած ապաստարանը լավագույններից է բաժանմունքում:

3. Լավագույններից է նաև տնտեսագիտության ինստիտուտի կոլեկտիվի աշխատանքային պայմանները, որի մասին վկայում է economics.sci.am կայքը:

Ավարտելով խոսք, ցանկանում եմ արձանագրել, որ ինստիտուտի գիտական անձնակազմը աշխատել է ջանասիրաբար, ինստիտուտում 1,5 տասնամյակում հետագիծ ենք թողել և պատմություն կերտել: Դրա փայլուն ապացույց է հանդի-

սանում ինստիտուտի գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին 480 էջանոց հաշվետվություն պատմական գիրքը, որի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է ինստիտուտի էլեկտրոնային կայքում:

4. Ինստիտուտը բաժանմունքում առաջիններից մեկն է աշխատանքային կարգապահության մակարդակով, որի աշխատակիցներն աշխատանքի են ներկայանում աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամերին: Դրա արդյունքում էր, որ հաշվետու տարին հարուստ էր հիմնարար հետազոտությունների հիման վրա հրապարակված գրքերով՝ թվով 15 հատ, գիտական հոդվածների ժողովածուներով՝ թվով 2 հատ, հարյուրից ավելի գիտական հոդվածներով ՀՀ կառավարություն ներկայացրած կիրառական առաջարկությունների գծով հրապարակված թվով 3 գրքերով, որոնցում ներառված կիրառական առաջարկությունների թիվը շուրջ 90 է:

5. Ինստիտուտը գործնական քայլ է կատարել իր կողմից հրապարակվող «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով հրապարակվող ամսագիրը ԲՈԿ-ի և Սկոպուսի ցանկերում ընդգրկվելու ուղղությամբ:

6. Ինստիտուտը լուրջ նախապատրաստական և գործնական քայլեր է կատարել և շարունակում է կատարել 2022 թվականի առաջին կիսամյակում գիտական և պատմական նշանակություն ունեցող նստաշրջան հրավիրելու ուղղությամբ, որը նվիրվելու է Հայաստանի տնտեսության ապագա արագատեմպ զարգացմանը, որին մասնակցելու ցանկություն են հայտնել Սկոպուսի փորձագետները Լոնդոնից և Հայաստանի պատասխանատու պաշտոնյաներ ու հասարակությանը քաջածանոթ տնտեսագետներ, գործարարներ, բուհական համակարգի ներկայացուցիչներ և լրագրողներ:

Գիտակազմակերպչական գործունեության մասով, ավարտելով հիմնական ասելիքս, ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել այն հրապարակումների վրա, որոնք անջնջելի հետք կթողնեն ինստիտուտի տարեգրության մեջ: Դրանք են՝

1. Ռոբերտ Սարինյանի և Վլադիմիր Հարությունյանի հեղինակած «Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը. գիտակենսագրական հանրագիտարան» երկհատորյակը, որոնք իրենց տեսակով եզակի են հանրապետությունում:

2. Յուրի Սուվարյանի և ուրիշների հեղինակած «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» 150 էջանոց գիրքը,

3. Վլադիմիր Հարությունյանի և ուրիշների հեղինակած «Հարկեր և Հարկագանձում» 600 էջանոց գիրքը,

4. Վլադիմիր Հարությունյանի հեղինակած ««Տնտեսական հրաշքները և տնտեսական նորոգություններն աշխարհում». գործարկման ուղիները Հայաստանում» 300 էջանոց գիրքը,

5. Ստեփան Պապիկյանի հեղինակած «Արցախի էներգետիկան» 200 էջանոց մենագրությունը:

6. Վլադիմիր Հարությունյանի հեղինակած «Տնտեսագիտության ինստիտուտի 2006-2020թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին» 480 էջանոց գիրք հաշվետվությունը, որը կազմվել է ինստիտուտի հաշվետվությունների նյութերի հիման վրա,

7. Անահիտ Աստոյանի հեղինակած «Բուրսայի նահանգի հայության տնտեսական վիճակը և նյութական կորուստները հայոց ցեղասպանության տարիներին» 320 էջանոց գիրքը,

8. Անի Ոսկայանի հեղինակած «Ադանայի նահանգի հայության տնտեսական վիճակը, 1909թ. ունեզրկում» 208 էջանոց գիրքը։

Խոսքս ցանկանում եմ ավարտել Պարույր Սևակից մեջբերմամբ.

Բոլորը այժմ կարդալ ու ***լսել*** գիտեն,

Ուրեմն փառք... կարդացածը և ***լսածը***։

Հասկացողին։

Բայց առավել փառք տնտեսագիտության ինստիտուտի առաջարկությունները գործարկողներին

Շնորհակալություն ուշադրության համար։

Եթե հարցեր կլինեն, պատրաստ եմ պատասխանել։